

Չայնակցողն էր կովարձ Թաթոսը, որ մօրը արգանդէն հովիւ էր եկած աշխարհ, ու հիմա, եօթանասունին, ոտքերէն «բռնուկ» (յօդացաւոտ), կը վայելէր իր Թախթը ու յարակից հեղինակութիւնը, իրեն արդարօրէն շնորհաբաշխուած, վաթսունէ աւելի տարիներու վրայ գեղացիին կովերը կշտացնող, հորթերը դայեկէ մը աւելի գուրգուրազին կովերէն առնող, նախնական խնամքներով պաշտպանելով խեղճ անասունին առաջին ժամերը ու բերող զայն յաղթական տանտիկիներն: Դուք թերեւս չէք զգար, որ իր հարսին արգանդէն շառաւիղի մը աւետիսը եւ Թաթոսին կռնակէն հորթուկին բառաչը իրար կ'արժեն գեղացիին հոգիին: Կովերուն վրայ սորված, զարգացած ու կեանքով եղած (իւղոտած) իր սրամտութիւնը, կոշտութեան, հայհոյութեան, նախնական մարդու անսանձ արտայայտութեան աղովն ու պղպեղովը դիւր կու գար գեղացիներուն: Կ'ըսէր ինչ որ կը մտածէր, այսինքն՝ աւելի առողջ ու իրաւ՝ քան Պոլսու պատրիարքը: Անոր փոյթը չէր, որ չորսը չէր կրնար հանել չորսէն, առանց մատներուն օգնութեան: Անհուն ծխող մը ու դժուար ճկող իր մատներուն մէջ՝ յօդացաւը քարէ փշրանքներ կիտուածեր էր անոր յօդակապերուն՝ կը պլլէր (յօրինել) սիկարը, յաղթական տրիբունին մատուցուելու համար, սպասելով, որ գիւղապետն ալ զանոնք պատուէր սուրճով: Հաշի՞ւ: Չունէր ինծի հետ, քանի որ խորունկ համակրանքը կը վայելէր իմ պատանութեան դեռ լեռնական խռովքներուն: Քանի՛ - քանի՛ հեղ անտրտունջ պատմեր էր ինծի իր կռիւներէն, գայլերու, արջերու հետ, ու մա'րդ ալ գազաններու հետ: Պատմեր աւազակ-ասպատակներէն այդ օրերը կէս դար կանխող շրջանէ մը, ուր լեռները հովուողը սիրտն էր, բազուկը, երկու կանգուննոց դանակը եւ ոչ թէ հիմկու պէս փամփուշտը: Անոր մասնագիտութիւնն էր Մանուլը, շատ նշանաւոր յուղկահար մը, որ մէկ ձեռքով կողոպտածը միւսով կը բաժնէր աղքատներուն ու գրաւ մը շահելու համար մտած էր կուսակալին տունը ու թռցուցած անոր Ֆէրմանը: ... Հեք-